П.l
h-19

p94.

# ԹՈՒՂԹՔ

Սբյն Իգնատիոսի ած
ազգեաց մրտրսի ան–
տիոքայ Եպսի·

՚ի Վեհապետուէ Տն
Ղուկասու Արքեպսն
Կաթուղիկոսի ամ
Հայոց·

Եւ ՚ի Պատրիարքութե
Սրբոյն Սաղիմայ՝ Տն
Յովակիմայ Արհի
Եպսի·

Տպեալ հրմնւ Տն
Զաքարիայ ազգա–
սէր Պատրիարքի կոս
տանդնուպօլսոյ·

1783

# Յառաջաբան առ ընթերցողս.

Սովորին միշտ մանկունք վար-
ժարանի մերոյ եկեղեցւոյն քանի
զչափ առնուլ իմաստուն վարժապե-
տացն և որք կիրթքն են լեալ 'ի
գիտութիւնս հռետորական ուսմանց
աստուածայնոց գրոց և աստուածայինն մեր հա-
ւատոյ աստուածպաշտութեանց։ Մեծացն
ասեմ այնոցիկ որ աստուածանման կեցին
յերկնի և հաստատեցին զեկեղեցի Մեր
որք լոյս աշխարհի եղեն ըստ ասացելումն
և աղ Երկրի և սիւնք հաւատոյ և
հիմունք Մերոյ եկեղեցւոյ. յորոցն
մի էր և աստուածազգեաց մեր հայրապետն
Իգնատիոս ընկալեալն 'ի Քրիստոսէ 'ի գիր-
կս, որ հնչեալն 'ի բերանոյն Աստուծոյ. ի-
մաստուն վարժապետն և դաստիարա-
կըն մանկանց սիոնի։ Որում և
որք նման իցեն նմա այն ունին ման-
կունք Սրբոյ եկեղեցւոյ բազմաւ
ըղձիւ գիտել զչափ վարուց նոցա
և ունկնդիր եղեալ հետևել ու-



ման

ման և բանից նոցա․ որպիսի ոք էր
և իմաստուն աշակերտն Սրբոյն պօղո-
սի մեծն ղուկաս․ իբրև զի աւէր
կամ եղև աւէ և ինձ որ իսկզբանէ
զհետ երթեալ էի ամենայն ճշմարտութեամբ
բանիցն այնոցիկ․ որպէս աւանդե-
ցին մեզ որք ՚ի սկզբանէ ականա-
տեսք և սպասաւորք եղեն բանին
կարգաւ գրել քեզ․ քաջդ թեո-
փիլէ․ և նմին իսկ ասէ լեալ ամ
իմաստից տենչացող աշակերտ Քրիստոսի
զհետ երթայ բանից սրբոց առաքելոց
և մարգարէից և հարց սրբոց․ հրա-
ժարեալք ըստ խրատու Սրբոյն պօղո-
սի յամենայն առասպելեաց հերձուածոց
և յամենայն պառաւական բանից ողջէտ
և անձնահաճ արանց որք և ՚ի ժամա-
նակս հինս եւս գտանէին, որպիսի
ոք դիոտրէփեան էր և սիմօն․ այլ
ոք երիմաս մոգն էր և շրջօղ հրէայ-
քըն և այլք․ և որպէս պատմէ սրբն
պետրոս, լինէին աւէ և սուտ մար-
գարէք ՚ի ժողովրդեանն որպէս և


այժմ

այժմ 'ի ձեզ լինիցին սուտ վարդապետք. և այլք այսպիսիք բանք յոլովք, որք սակս անմտից և ապականեալ արանց ասացեալք. յորոց 'ի բաց կան միշտ որք զուղիղն խորհին և կամք են նոցա յար լսել այնոցիկ որք լուան յայ, ուսան 'ի քնէ և լցեալք եղեն շնորհօք հոգւոյն սբյ. յորոցն կարգի են և ուսումնասէր մանկունք հայաստանեայցս սբյ եկեղեցւոյ. որք 'ի սկզբանց անտի 'ի քնէ և սբց առաքելոցն 'ի Թադէոսէ և 'ի Բարդուղիմէոսէ և 'ի Սբյն Գրիգորէ մեր լուսաւորչէ ամենա ճշմարիտ սրտիւ զհետ եղեն ճշմարտութեանն և բանից այնոցիկ որք սպասաւորք և ականատեսք եղեն բանին այ տն մերոյ յսի քսի ըստ գրելոյն սբյն Ղուկասու. Այլ զի ընդ այսու ժամանակաւ հաւաքիւր երանելլին Իգնատիոս 'ի բանս իւր եթէ իցեն արդարև նորա թուղթք ածաշունչք և խրատականք գրեալք



սա

առ եկեղեցիս, 'ի ժամանակի մար-
տիրոսութեանն իւրոյ. և թէ գոն
առ մեզ նոյնք թուղթք. 'ի նախ-
նեաց մերոց 'ի Սբյն խաչակայ պար
թևէ և 'ի մեծէն Եւրոպայ և յա
շակերտաց նոցին թարգմանեալք. (ո-
րոց յիշատակն օրհնութեամբ եղի-
ցի ը̄ գրոյն և աղօթիւք նոցա տէր
մեզ ողորմեսցի.)

Ուստի և 'ի տուփս սիրոյ վառեալ
բազմաց 'ի մանկանց Սրբոյ եկեղեց
ւոյս հայաստանեայց, ճեպէին գիտել
զնոյնս և առնուլ զճաշ բանիցն սբյն.
որոց և հետևիլ հոգւով իբրև
բանից սրբոց Առաքելոց և Մար-
գարէից.

Այլ զի ը̄որում 'ի բազմաց անցելոց
'ի վ̄ր ժամնկց 'ի դէպէ իրաց և իրա
կութեանց անհետ լինիլ կամ նո-
ւազունս գտանիլ. ըստ այսմ սարա
սի և վասն թղթոցս գոգցես գո-
մինչ զի համարեա թէ զկնի բազում
աշխատանաց և հետամուտ գոլոյն մե

 րոյ

բոց ՚ի գիւտս ամենայնից թղթոցս
՚ի ձեռն բարեկարգական և խնամատարենից
մեծաշնորհաւոր գործի Մաթէոսի և
տպագրողի (որ և մի էր ՚ի օծրաշա-
բացն ամենայնին բանիցս. որ և անդու-
լ աշխատեցմամբ ջանաց ՚ի գիւտ թղ-
թոցս զորս և եած ՚ի լոյս ժամանա-
կութեամբ տպագրութեան) հազիւ
թէ զհինգ օրինակս հինս և ընտի-
րըս միայն կարացաք գտանել. յորոց
կարի խուզմամբ որոնեալ հանաք
զանանս սխալմունս ՚ի գրչաց ներ-
մուծեալս. զի էր ինչ զի երկո-
քումբք օրինակօքն զերծան ստուգե-
աք. և էր զի երեւքն զերծուան. և
էր զի միում ՚ինորացանց հետեւեաք.
և այսպէս ՚ի հնգից անտի ստուցեալ
օրինակաց նախակինից հանաք զմեցե-
բորդն բարւոք ստուգեալ. բայց և
զամենս հարաւ և զխոնարհմունս
անուանց և բայից թողաք ըստ հնո-
յն սովորութեան. և ըստ այսմ
կերպի ընթացուցաք զթուղթքս ըն-

 ատ

սաւոր բանից սրբոյն իգնատիոսի Թուղթ 13. որք են այսոքիկ. Նախ զԹուղԹ մի գրեալ նորին առ զմիւռնացիսն առաջներորդ. Երկրորդ առ պօղիկարպոս Սրբազան եպիսկոպոս զմիւռնիայ քաղաքին առաջներորդ. Երրորդ յեփեսոս քաղաք առաջնորդ. Չորրորդ 'ի մագնիսիա քաղաք առաջնորդ. Հինգերորդ 'ի տրալլիանոս քաղաք առաջներորդ. Վեցերորդ 'ի Ֆիլատելփիայ քաղաք առաջներորդ. Եօթներորդ առ Հռոմ քաղաք. Ութերորդ յանտիոք ասորոց. Իններորդ մարիայ կնոջ միոյ 'ի կասպալոն քաղաքէ՝ առ իգնատիոս երանելի գրեալ. Տասներորդ պատասխանի Թղթոյն մարիայ, երանելոյն իգնատիոսի գրեալ. Մետասաներորդ 'ի տարսոն քաղաք. Երկոտասներորդ առ սուրբն սարկաւագ. Երեքտասաներորդ 'ի փիլիպպոս քաղաք. որք 'ի ձեռս մեր եկին: Այլ մնացորդք Թղթոցն նորին զորս ոչ կարացաք գը-



տա

տանել են այսոքիկ․ որք են Թուով
9․ Ա, առ սբն յօհաննէս առաքեալ
և աւետարանիչ․ Բ, առ նոյնն դար
ձեալ․ Գ, առ սբ կոյս մարիամ ած
ածինն․ Դ, առ եփեսացին երկրդ․
Ե, առ մագնիսիացին երկրորդ․
Զ, առ տրալլիանացին երկրորդ․
Է, առ փիլադելփիացին երկրորդ․
Ը, առ զմիւռնացին երկրորդ․
Թ, առ պօղիկարպոս եպսկն զմիւռ
նոյ երկրորդ․ զի ՚ի բուն օրինակն
յունաց՝ են նորին Թուղթք, 22․ Իսկ
մերս ասաէն այժմ այսքան․ Իբր է
Թէ արդարև են իսկ Թուղթքս սբյն
իգնատեայ գրեալք ՚ի ժամանակին
յորում եղանէր նա յասորոց անտի
՚ի հռոմ ՚ի ժամանակս տրայիանոսի
ամպարշտի վկայել վս անուան տն
մերոյ յսի քսի․ ունիմք այժմ ըզ
վկայս մեծամեծս․ Նախ զսբն դիո
նեսիոս՝ որ գրէ ՚ի գիրս ածային
անուանց ՚ի չորս գլուխն ՚ի ժա բնա
բանին յաղագս Թղթոյն որ առ հռօ

 մայ

մայեցիսն 'ի ճառն ա̃ծայնոցն տռփ_
մանց. և զի թուեցաւ ասէ ոմանց
առ 'ի մէնջ սրբազնաբանողաց՝ ա̃ծ_
այնագոյն լինել զտռփմանն անուն
քան զսիրոյն. քանզի գրէ և ա̃ծ_
այինն Իգնատիոս, եթէ իմ տռփումն
խաչեցաւ. Երկրորդ՝ զԵւսեբի Պամփ
իլացին որ գրէ յեկեղեցական պատ
մագրութեան իւրում 'ի յերրորդ
դպրութեանն 'ի յերեսուն և վեց
պրակին վասն ոմանց թղթոցն ս̃բյն
Իգնատիոսի յորում յայտնէ և զան
ուանս ս̃բց եպիսկոպոսացն, այս է ըզ
Պօղիկարպոսի, զՈնեսիմոսի, զԴա_
մայի, և զՊօղըբուոսի որք էին 'ի
ժամանակին յայնմիկ լեալք եպիսկո
պոսք քաղաքացն զՄիւռնոյ, Եփեսո
սի, Մանգնիսեայ և Տրալլիանոսի.
Նաև վասն Հռօմայեցւոց թղթոյն ըզ
յոլովս. Երրորդ՝ գրէ երանելի հայ
րապետն մեր ս̃բն Պետրոս գետա_
դարձն 'ի կարգս մանկտեաց 'ի շա_
րակնոցին վասն Հռօմայեցւոց թղ_


թոյն

թոյն այսպէս առելով՝ որ զբաժակն անմահութեան սիրոյ քոյ արբեալ երանելին Իգնատիոս ոչ ցորեան ած̄-ոյին գազանաց մանրեալ ժանեօք հաց ս̄բ գտանէ ա̄յ. Չորրորդ՝ յայտնի են առաքելական թուղթքս ս̄բյն Իգնատիոսի գոլ ՚ի լիակատար պատմութիւնս ս̄բյն որ ՚ի Ճառընտիր գրեքն հայոց և մասն ինչ յայսմանուլն ՚ի դեկտեմբ" ժէ. Հինգերորդ յայտնի են բանքս ս̄բյն Իգնատեայ գոլ. Նաև ՚ի թղթոցն. զի ըստ շաւղաց Առաքելոցն առաքելոցն են բանքս և մանաւանդ ս̄բյն պօղոսի. որում յար և նմանք են համայնք բանք ս̄բյս. պատուէրքն, յորդորքն խրատքն, ողջոյնքն և այլքն ամենայն. Վեցերորդ՝ վկայեն թարգմանութիւնք թղթոցս որպէս և գրեցաքն նախ յերանելի թարգմանչացն մերոց գոլ. Եօթներորդ՝ զի ունին զթուղթքս զայսոսիկ և յոյնք ընդ ձեռագրացն և ղոպէտալսն զորս և կոչեն գրե- սյես

ինչպատիւ Եփիփանիոսէ՝ (որ թարգմա
նի նորին ինդնատիառի թուղթք) որք
են թուով ԺԲ ըստ յառաջագոյն
կանխելոյն մերոյ յասելն ՝ի շարս
թղթոցն. եւ թէ զերեքտասանն եւ
եթ կարացաք գտանել. որոց եւ սի-
րաշար եղեալ բարեպաշտից ոմանց
եառուն ՝ի տպել ՝ի զուարճութիւն
մանկանց նոյ եկեղեցւոյ որոց եւ
ըղձոշակն առեալ բարեպաշտօն ու-
սումնասիրացդ եւ որք սիրէքդ զվե-
րնցեալն ՝ի քնէ զերանելի ածաղ-
գեայն՝ ըստ գիպելոյ բարեպատեհ
ժամու եւ զայլս թուղթս նորին զմնա
ցորդսն ՝ի ռետորակէս ՝ի ձեռն ա-
ծեալ լուացուցանելոյ էք (ըստ յու-
սոյն մերոյ կամօքն այ) զռետորակէս.
Որոգայս որոյ եւ որբաղրող թղթո
ցըս եւ շարող բանիցս Սինաս ե-
պիսկոպոս բագրեւանդա եւ բնիկ մի-
աբան Սէյ լուսակամփ Թառայն
Էջմիածնի եւ Նուիրակ Կոստանդնու-
պօլսոյ, սիրով խնդրեմ ՝ի ձերոց-


մա

մաքուր սիրոյ հոգալ վասն մնացոր_
դացն 'ի ընուղ տեառնակիս. Երախ_
տագէտ եղեալ Նախնի հարցն մե_
րոց Ս̃բց և երանելեաց. որք աշխատ
եղեալք Թարգմանեցին զնոյնս յու_
սումն վարժարանի որդւոյ եկեղեց_
ւոյս հայաստանեայց. որոց 'ունիմք
զպարտաւորութիւն ոչ զլանալ զե_
րախտիսն. այլ հատուցանել զպարտ_
սն ըստ սրբազան առաքելոյն խրա_
տու. զի լինիցիմք արդարև որդիք
հարազատք հոգևոր հարցն մերոց
Ս̃բց. որպէս զի և բարերար հայրն
Երկնաւոր նոցին մաղթանօքն պար_
գևեսցէ մեզ զբարիս 'ի ձեռն բա_
րեգործ որդւոյն իւրոյ միածնի
պարգևօք ամենազօր Ս̃բ հոգւոյն ճշ_
մարտի. որում փառք և երկրպա_
գութիւն մշտնջենաւոր օրհ_
նաբանութեամբ այժմ և
միշտ և յաւիտեանս
յաւիտենից
Ամէն.

Թուղթ երանելւոյն Իգնատիոսի ա՟ծազ-
գեաց Եպիսկոպոսի Անտիոքայ, գրեալ ըստ
եւրոպանչիւք քաղաքաց. յորժամ ելանէր վկայ
եւ 'ի Հռոմ 'ի թագաւորութեանն
Տրայիանոսի.

## Առ Զմիւռնացիս.

### Գլուխ, Ա.

ԻԳՆԱ

**ՏԻՈՍ ՈՐ Ի ԱՍՏՈՒԱԾԱԶԳԵԱՑ·** Եկեղեցւոյդ Աստուծոյ Հօր, և սիրելոյ որդւոյ նորա Յ՟սի Ք՟սի



Որ

Որ է ՚ի զմբեռնիս աճեցուց, և հանգուցեալ է ամ շնորհօք. Այլ կատարեալ է հաւատովք և սիրով և ոչ է պակասեալ միով իւիք ՚ի պարգևացն Քրիստոսի, և արժանի է Աստուծոյ, և զգեցեալ է զսրբութիւն անարատ հաւատով և բանիւ Աստուծոյ՝ բազում ողջոյն.

Ե Փառաւորեմ զՅս Քս. որ այսպէս իմաստնացոյց զձեզ. ստուգեալ եմ վասն ձեր եթէ հաստատեալ էք անշարժ հաւատով. իբրու թէ ՚ի խաչ տն մեր Յսի Քսի բևեռեալ էք մարմնով և հոգւով. Այլ կատարեալ էք սիրով արեամբն Քսի, և զօրացեալ էք ՚ի սէր մեր Յս Քս, որ եղև ՚ի զաւակէ Դաւթի ըստ մարմնոյ, և է որդի Աստուծոյ բնութեամբ և զօրութեամբ. Որ ծնաւ ճշմարտապէս ՚ի կուսէն Մարիամայ. և

՚ի յանշարժ հաւատոյն



մեր

մկրտեցաւ ՚ի յորդանան ՚ի Յովհան
նէ, զի կատարեսցի ՚ի ձեռն նորա
ամենայն արդարութիւն. Եւ ճշմար
տապէս բեւեռեցաւ մարմնով ՚ի
Խաչին վասն մեր, յաւուրս պոն
տացւոյ Պիղատոսի և հերովդեսի
չորրորդապետի, յորմէ պտղոյ և
մեք եմք. Եւ ՚ի նշանէ այնմ՝ որ
արժանաւորեաց զմեզ երանութեն
Ածութեանն. բարձրացուցեալ նշան
ծի յարութեամբն իւրով. Սրով
և սրբեաց զհաւատացեալս, եթէ
՚ի հրեից՝ և եթէ ՚ի հեթանոսաց,
վասն միոյ մարմնոյ որ է եկեղեցի.
Զայս ամենայն չարչարեցաւ, առ
՚ի կեցուցանել զմեզ, և ճշմարտա
պէս յարեաւ ՚ի մեռելոց: Եւ ոչ
որպէս ոմանք ասեն՝ որք ոչն հաւա
տան, եթէ կարծեօք իմն չարչարե
ցաւ. որ ինքեանք իսկ են կարծիք
և ըստ իւրեանց մտաց դէպ լինիցի
նոցա. և եղիցին անմարմինք իբրև
դևս. Իսկ ես և յետ յարութեն

[illegible]

'ի մարմնի գիտեմ և հաւատամ ըզ-
տէրն. Վասնզի յորժամ առ Պետ-
րոսեանսն եկն՝ ասէ ցնոսա, շօշափե-
ցէք զիս և տեսէք զի ես նոյն եմ,
և ոչ եմ ոգի առանց մարմնոյ. Եւ
յայնժամ մերձեցան առ նա և հա-
ւատացին որք հաղորդեցանն և ճա-
շակեցին նախ զմարմին և զարիւն
նորա. վասն և արհամարհեցին զմահ.
Եւ յետ յարութեան եկեր և արբ
ընդ նոսա, և էր մարմնով և հոգ-
ւով, և միաւորեալ ընդ Հօր.

## Գլուխ, Բ.

Զայս գրեմ առ ձեզ սիրե-
լիք, քանզի գիտեմ եթէ
և դուք այսպէս հաւատայք, և կան-
խամ զգուշացուցանեմ զձեզ 'ի
մարդակերպ գազանաց անտի. Որ
ոչ միայն թէ ընդունելով չէ պարտ
ձեզ ընդունել զնոսա, այլ թէ
հնար իցէ, և ոչ հանդիպելով

հաղորդել նոցա, բայց միայն աղօթե-
լով աղօթել վասն նոցա, թերևս
ապաշխարեսցեն. համարիմ թէ՝ և
այս դժուարագոյն է նոցա.

Նաև ՚ի վերայ այսոցիկ՝ միայն Յսի
Քսի գոյ իշխանութիւն. զի նա է
ճշմարիտ կեանք մեր.

Իսկ՝ եթէ կարծեօք գործեցան այս
ամենայն ՚ի ձէնէ, ապա և ես կար-
ծեօք եմ կապեալ. և ընդդէմ մատ-
նեցի զանձն իմ ՚ի մահ, և ՚ի խայտա
ռակման գազանաց հրոյ և սրոյ.

Զի որ մերձաւոր է սրոյ՝ մերձա-
ւոր է և աստուծոյ. և եթէ իցէ ՚ի
մէջ գազանաց՝ առ Այ է.

Բայց միայն յանուն Յսի Քսի, և
վասն նմա չարչարակից լինելոյ, ամ
համբերեմ. այնու որ զօրացուցանէ՛
զիս Յս Քս Այ մեր.

Զի եթէ ոմանք յանդիմանութենէ
ուրանան զնա, նոյնպէս և նա ինքն
զնոսա ուրանայ. որք են ՚ի կողմն
մահու առաւելքեալ, քան ՚ի ճշմար-

տութեանն.

Զի՛ ոչ անսացին մարգարէութեան մարգարէիցն, և ոչ օրինացն մովսեսի. այլ և ոչ այժմ Սրբոյ Աւետարանին. որք և ոչ 'ի գիրս մեր հայերն, զոր ոմանց ոմանց ուսուցանեմք. Արդ՝ և վասն մեր այսպէս խորհին՝ զինչ օգուտ է ինձ, եթէ ոք զիս փառաւորէ, և զտէրն իմ հայհոյէ. և ոչ հաւատայ եթէ մարմին զգեցաւ:

Իսկ որ այսմ ոչ հաւատայ՝ ուրացող է կատարեալ, և ինքն զգեցեալ է զմահ:

Արդ՝ զանուանս անհաւատից ոչ է բարւոք ինձ գրել, քան լռել ինձ՝ և յիշել զնոսա մինչև ապաշխարեսցեն, և հաւատասցեն զչարչարանս փրկչին մերոյ, որ է յարութիւն մեր: Մի՛ խաբէք, զի և երկնաւորք և հրեշտակացն փառք, և իշխանքն՝ երևելիք և աներևոյթք եթէ ոչ հաւատան յարիւնն Քի՛ի՝ դա-

տապարտեսցին. որ բաւական է տա
նիլ տարցի.

Ջանամք և մեր՝ է լրումն ամի, և
չիք ինչ առաւել քան զնոսա.

Նմին առէք և զոյս օտար են մօք
՚ի շնորհացն Աստուծոյ, որ եհաս
առ մեզ. Թէ որպէս են հակառակ
կամացն Աստուծոյ և սիրոյ նորա.
Նոյն ոչ ունին հոգաբարձութիւն
որբոց և այրեաց, նեղելոց և կապե-
լոց, քաղցելոց և ծարաւելոց. և
հեռացեալ են ՚ի գոհութենէ և
յաղօթից. զի ոչ հաւատան գոհու-
թեանն, որ է մարմին և արիւն փրկ
չին մերոյ Յսի Քսի. որ չարչարե-
ցաւ փոխանակ մեղաց մերոց, զոր յա
րոյց Հայր քաղցրութեամբ իւրով.
Իսկ որք ընդդէմ են պարգևացն
Աստուծոյ, ՚ի քննելն իւրեանց մեռա
նիցին. Բարւոք էր նոցա սիրել
զչարչարանս նորա և կեալ.

Արժանի է ձեզ հեռանալ յայնպիսի-
եացն, և ոչ բանիւք անգամ խօսել

Եւ յո ղոգո ոգո- դի ոչ է փոյթ նոցա.



ընդ

ընդ նոսա առաջի ժողովրդեանն.
Նայեցարուք 'ի մարգարէսն. Եւ առաւել յԱւետարանն յորս Ճառի փրկութիւնն մեր. և կատարէ զյարութիւն մեր.
Այլ յերկմտութէ փախերուք որպէս 'ի գլխոյ չարեաց.

## Գլուխ, Գ.

ԱՄԵՆԵՔԵԱՆ Եպիսկոպոսի հնազանդ լերուք որպէս Յի Քի և Հօր Այ. և քահանայից իբրև առաքելոց Քի. և 'ի սարկաւագաց պատկառեցէք իբրև 'ի հրամանէ Այ.
Այլ մի ոք գործիցէ ինչ առանց եպիսկոպոսի յեկեղեցական գործոյ. Ճշմարիտ պատարագ համարեսցի՝ որ ինչ յեպիսկոպոսէն գործիցի. կամ յայնմանէ՝ որ 'ի նմանէ գործել հրամայի.
Ուր և երևի եպիսկոպոսն՝ անդ և զկնի ամ ժողովն. որպէս թէ ուր


իցէ

իցէ Յս̅ի Ք̅ի, անդ իցէ Կաթուղիկէ
եկեղեցի.

Չէք իշխանութի̅ առանց եպիսկո_
պոսի ումեք, ոչ մկրտել զոք, և ոչ
առնել հանդիստ. բայց զոր ինչ
նա քննեսցէ՝ այն է հաճոյ Աստու_
ծոյ. զի լինիցի ճշմարիտ և հաւա_
տարիմ, զոր ինչ և գործիցէք.

Արդ՝ պատշաճ է արթուն կալ, մինչ
դոյ ժամանակ ապաշխարութեան.

Բարւոք է ճանաչել զԱ̅ծ և զեպիս
կոպոս. և որ պատուէ զեպիսկոպոս՝
պատուի ՚ի յԱստուծոյ. և որ
գործէ ինչ և ծածկէ յեպիսկոպո_
սէ՝ ծառայ է նա սատանայի.

Ամենայն ինչ ձեր շնորհօք առաւե
լուցու, որպէս և արժանի էք. զի
յամենայնի հանգուցէք զիս, և զձեզ
հանգուսցէ Յս̅ Ք̅ս. զի ՚ի մերձե
նալս իմ առ ձեզ. և ՚ի հեռանալս
իմ ՚ի ձէնջ՝ սիրեցէք զիս.

Փրկեսցէ զձեզ Ա̅ծ զի արժանի լի
նիցիք այնմ, վասնորոյ զամենայն ինչ

համբերէք.

Զփիլոնն և զագրիոսն և զագաթա-
փոդ որք հետորդք եղեն ինձ ՚ի Քս,
բարւոք արարէք, զի ընկալայք իբրև
զպաշտօնեայս Աստուծոյ, և նոքին
իսկ գոհանան առ Տր վս ձեր, զի
հանգուցիք զնս ամ իրօք. Ձեզ ինչ
ոչ կորնչի. Հոգիս իմ եղիցի փոխա
նակ անձանց ձերոց. և զկապանս իմ
զոր ոչ արհամարհեցիք, և ոչ ամօթ
համարեցարուք. և ոչ զձեզ յամօթ
համարի՝ կատարեալ յոյսն իմ Յս
Քս. Աղօթք ձեր եհաս ՚ի յանտիոք
ասորւոց, վս զի անտի կապեալ եմ
կապանօք, որ հաճոյ են Այ.

Ողջոյն տամ ամենեցունց. և ոչ եմ
արժանի կոչիլ մի ՚ի նոցանէ, զի նուա-
ստ եմ քան զամենայն մարդ.

Արդ՝ կամօք իմ արժանաւորեցայ՝
ոչ ՚ի մտաց, այլ ՚ի շնորհացն Այ. զոր
աղօթեմ զի լիութի տացի ինձ. և
աղօթիւք ձեր արժանաւորեցայց Այ.
Եղիցին կամք ձեր կատարեալ յերկրի


և

և յերկինս։

Վայելուչ է ձեզ ընտրել յեկեղեց-ւոյ ձերում կարապետ՝ առ ՚ի յեր-թալ յատորիս և ուրախանալ ընդ նոսա յողջոյնս իւրեանց. զի ընկալան զմե-ծութիւնս իւրեանց, և տուեալ նոցա կատարումն անձանց իւրեանց։

Այժմ տեսանեմ ես գործ մի համոյ այ ոպ զի առաքիցէք զմի ոք ՚ի ձէնջ հան-դերձ Թղթով ձերով, զի փառաւոր առնիցէ զՔս ընդ նոսին, վասն անդոր-րութեան օրոյն՝ որ եղև նոցա, և հա-սին ՚ի նաւահանգիստ ազօթից ձեր։ Քանզի կատարեալ էք, և զկատար-եալն խորհիք և կամիք զբարին գոր-ծել, զոր Քս պատրաստ է ՚ի տալ։

Ողջոյն տայ ձեզ սէր եղբարց որ են ՚ի Տրովաս. վասն զի անտի գրեցի առ ձեզ՝ ՚ի ձեռն Բուրդիոսի, զոր առաքեցիք ընդ եղբարս ձեր Եփեսա-ցիս. որ և ինձն իսկ Բուրդիոս յամե հանգոյց զիս։

Լաւ էր թէ ամ մարդ նմանէր նմա։

 վասն

վ̅ս̅ զինեալ ինքն նման է ստոյգ պաշ-տօնէի քո. տացի նմա շնորհք յամի.

Ողջոյն տամ եպիսկոպոսին ձերում, որ արժանի է քո. և քահանայից ձերոց և սարկաւագաց կարգակցաց իմոց՝ որք են հաճոյք քո.

Ողջոյն տացուք միմեանց ամենեցունց յանուն տն մերոյ Յսի Քսի. և մարմ-նով Նր և չարչարանօք. և արեամբ և յարութեամբն. և մարմնով և հոգ-ւով միաւորութբ քո և ձեր.

Շնորհք ը̅ ձեզ և ողջոյն և համ-բերութիւն յամ ժամ.

Ողջոյն տամ ձեզ փիլիմոն որ է ըն-դիս. Ողջոյն տամ տանց և եղբարց ձերոց հանդերձ կանամբք և որդ-ւովք նոցա, և կուսանաց՝ որք կոչին այրիք. ողջ լերուք զօրութեամբ հօր. Ողջոյն տամ աղակոյ սիրելւոյ իմոյ, և դափնոսի ընտրելոյ, և դա-գեոսի, և ամ մարդոյ ը̅ անուան իւրոյ.

Ողջոյն տամ տանն գաւիա, և ազգ-

 թեամ

Թեմ վասն նորա, զի հաստատեսցի
հաւատով եւ սիրով ըստ մարմնոյ եւ
ըստ հոգւոյ.

Ո՛ղջ լերուք շնորհիւն ա̃յ Ա՛մէն.

Առ Պօղիկարպոս եպիսկոպոսն
զմիւռնեայ թղթոյն.

## Գլուխ Ա.

ԻԳՆԱՏԻՈՍ ՈՐ ԵՒ Ա̃ԾԱԶԳԵԱՑ Պօղիկարպոսի Եպիսկոպոսի Եկեղեցւոյ զմիւռնեայ քաղաքին, յԱ̃յ հօրէ եւ ՚ի Տեառնէ մերմէ Յ̃սէ


Ք̃սէ

՚Իմէ բազում ողջոյն.
Ա՟ զի ճոխանեցի՛ր առ իս միտք քո,
որ հաստատեալ է ՚ի Ա՟Յ, իբրև
յանշարժ վէմ.
Այժմ առաւել փառաբանեմ զԱ՟Ծ,
զի արժանի եղէ պատկերի քում՝
որում Աստուծով փափաքէի.
Արդ՝ խնդրեմ ՚ի քէն շնորհօքն զոր
զգեցեալս եմ առաւելուլ զընթացս
քոց գնացից, և խնդրել վ՟ որդւոց
մարդկան՝ զի կեցցեն.
Այլ արդ՝ հայցեմ զպատշաճն, ջա-
նիւ՝ մարմնով և հոգւով. և կացջիր
զհոգաբարձութիւն վ՟ միաբանութե՟.
վ՟ զի չիք ինչ առաւել քան զնա.
Բարձ ՚ի քեզ զա՟մ մարդ, որպէս
և զքեզ բարձեալ է տէր մեր
Յ՟Ս Ք՟Ս.
Ընկալնամի՛տ լեր առ ամենեսեան
սիրով, որպէս և առնէաք իսկ.
Աղօթից ստէպ կաց և խնդրեա զըզ
գօնութիւն առաւել քան զոր ու-
նիսդ. արթուն կաց որպէս և ես.

 ան

անքուն ոգի ստացեալ.

Ընդ ամ մարդոյ՝ ըս կամաց ամ խօ-
սեսջի՛ր. զտկարութիւն ամ մարդոյ
բարձ իբրև զայր կատարեալ. ուր
բազում է աշխատութիւն, բազում է
և օգուտն.

Եթէ զբարիսն միայն աշակերտեալ
սիրես՝ ոչ շնորհ է քեզ. այլ առա-
ծել զչարսն հնազանդեցո հե-
զութեամբ.

Ո՛չ եթէ ամ վէրք միով դեղով
բժշկին. այլ զհատեալն կակղուց
հանգո՛. Լեր իմաստուն իբրև զօձ
յամ ինչ, և որոց արժանի են՝ ան-
բիծ իբրև զաղաւնի.

Սո՛ այսորինակ՝ ես դու մարմնաւոր
և հոգևոր. զի զորս և երևեսցին
առաջի երեսաց քոց՝ շահեսցիս.

Զա՛ զորս ՚ի ծածուկս են՝ խնդրեա՛,
և յայտնեսցին քեզ. և ոչ միով իմիք
պակասեալ գտանիցիս, այլ և յամ
պարգևս առաւելասցիս.

Խնդրեա՛ դու քեզ ՚ի ժամնէ իբրև

 իմաս

իմաստուն նաւավար զհողմ. և իբրև
զալէկոծեալ՝ զնաւահանգիստ. ոչ
զի արժանի լիցիս այ.

Արթուն կաց իբրև զքաջ զինուոր
Քի. վս զի զոր ինչ խոստաց-
եալն է մեզ, կեանք են յաւիտե-
նից, որ ոչ անցանէ. զոր դու քաջ
ստուգիւ գիտես.

Յամի անձն իմ եղիցի փոխանակ ան-
ձին քում. և կապանք իմ զոր սիրե-
ցեր. Իսկ՝ այնոքիկ որք համարին
եթէ իցեն ինչ, և ուսուցանեն օտար
ուսմունս, մի զարմանայ ը նոսա.
այլ կացջի՛ր 'ի ճշմարտութեն՝ իբրև
զայր հզօր որ հարկանի՝ և ոչ անկա-
նի. քանզի՛ հզօրին է հարուածիլ
և յաղթել։

Յո՛ւս առաւել վս այ զամ ինչ պտրա
է մեզ կրել՝ և համբերել. զի և նա
համբերեաց վս մեր.

Փութացո՛ղ լեր առաւել քան զոր
եսդ. և 'ի միտ առ զժամանակն, և
զոր 'ի վերին է քան զժամանակս.



Յու

Եթէ ակն կալ այնմ՝ որ ոչ ունի զժամանակս.

Անտեսանելւոյն՝ որ վն մեր տեսաւ. անշօշափելւոյն և անչարչարելւոյն, որ վն մեր չարչարեցաւ, և զամ ինչ ամբէ վն մեր կրեաց.

## Գլուխ Ի.

Զայրիս մի արհամարհեսցես՝ այլ դու ինքնին հոգասցես զնս. Եթէ մի ինչ գործեսցի առանց քո կամացդ, և ոչ դու գործեսցես ինչ՝ առանց նր կամացն, որպ և չէր իսկ գործեալ.

Այլ բարւոք կաց՝ և հանապազ ժողովեա զեկեղեցի, և զամ մարդկան ուանե կոչեա. զծառայս և զաղախնեայս ուսուսցես մի արհամարհել ըզ տէարս.

Նոյնպէս նոքա մի արհամարհեսցեն զնս. այլ՝ որպ փառաց Տեառն ծառայեսցեն՝ զի արժանի լինիցին առա

ճել ազատութիւն գտանել յայս,
Ո՛չ սիրեսցեն ազատիլ ՚ի հասարակաց
ծառայութենէն, զի մի՛ գտանիցին
ծառայք ցանկութեանց.

՚Ի չար խորամանկութեանց փախիր.
Բնա՛ւ ամենեւին խօսեսջի՛ր ը՟ քարոզ-
իմ վասն այսոցիկ և տուսցես նոցա
սիրել զՏէր, և բաւական է նոցա
՚ի գործս իւրեանց մարմնով և հոգ-
ւով. Որպէս և եղբարց իմոց պատ-
ուիրեա՛ յանուն տեառն մերոյ Յսի
Քսի, սիրել զկանայս իւրեանց,
իբրև Տէր մեր զեկեղեցի իւր.
Իսկ եթէ որ ժուժկալութիւն ու-
նիցի, և կարող է կալ սրբութեամբ ՚ի
պատիւ մարմնոյ տն, կացցէ և մի
պարծեսցի. իսկ եթէ որ պարծես-
ցի կորիցէ. և եթէ գտանիցի որ
առանց եպիսկոպոսի ապականեսցի.
Պատշաճ է արանց և կանանց ամուս-
նացելոց՝ հրամանաւ եպիսկոպոսի
ամուսնանալ, զի եղիցի ամուսնու-
թիւնն ՚ի Տէր. և ոչ ցանկութեամբ.


ամ

ամ ինչ 'ի փառս այ եղիցի.
Հայեցարուք յեպիսկոպոսս, զի ԱԾ
'ի ձեզ նայեսցի. անձն իմ փոխանակ
անձանց ձերոց.
Եթէ հնազանդելք եպիսկոպոսի և
քահանայից և սարկաւագաց. եղիցի
ինձ մասն ը ձեզ առ ԱԾ.
Ընդ միմեանս վաստակեցէք, և ը
միմեանս չարչարեցարուք, ննջեցէք
և զարթիք ընդ միմեանս՝ իբրև տըն
տեսք այ և ընտանիք և սպասաւորք
նր. Հաճոյ լերուք և ծառայեցէք
նմա. զի ընկալջիք 'ի նմանէ պար-
գևս, և մի ոք ապստամբ գտցի.
Այլ կացցէ 'ի ձեզ հաւատն իբրև
զէն, և յոյսն իբրև զսաղաւարտ,
և սէրն իբրև զնիզակ, և համբե-
րութիւն իբրև զվահան. Եւ գանձք
եղիցին ձեր՝ բարի գործք ձեր, զի
ընկալջիք պարգևս յայ. Երկայնա-
միտ լերուք միմեանց հեզութը, որպ
թէ ԱԾ իցէ 'ի մէջ ձերում, և ես
ուրախ եմ 'ի ձեզ յամ ժամ.



Այլ

Սալ վն̃ եկեղեցւոյն Սնտերքայ ա-
տրւոց հանդարտեալ է աղօթիւք
ձեր. ով̃ եգրեցին առիս. Եւ ես
խաղաղութք̃ եմ յուսոյն Ս. Տ. ա
ղօթիւք ձեր և աշակերտ ձեր գտա-
նիմ. Բարւոք է ով երանելիդ փօ-
ղնկարպէ՝ ժողովել խորհրդով զխոր
հրդակիցս արժանիս ամ̃, և ընտրել
զորս յոյժ սիրելի է ձեզ, որս առա
քինիս, որք կարողք են լինել կարա
պետս ամ̃, և առաքել յաշտրիս, ով̃
զի փառաւորեսցեն զսէր ձեր.
Սրդ քրիստոնէի չիք իշխանութի
ւնձին իւրում, այլ պատրաստէ ամ̃.
Եւյս գործէ ամ̃ և ձեր, յորժամ
կատարիցէք զսա.
Ես հաւատամ շնորհացն ամ̃, եթէ
պատրաստ էք գործոյն ամ̃. զի և գի
տեմ զպատրաստութին̃ ճշմարտու-
թեան ձերում.
Յամի գիրս խնդրեմ 'ի ձէնջ. զի
ամ̃ եկեղեցեաց ոչ հանդուրժեցի
գրել զի յանկարծակի մեկնեցայ 'ի

գրեաւ ՚ի Նեխապօլիս.

Արժամ դու երբեւ այր որ ստացեալ է զմիտս այ՝ գրեան յեկեղեցիս որ ՚ի վէր են քան զմեզ, ով զի եւ նոքա զնոյն գործեցեն.

Այլ առաքեսցեն արս որք կարօղքն իցեն հանդերձ թղթովք ձերովք. զի փառաւորեսջիք ՚ի գործան յաւէր տեղեաց ած եւ արժանի էք.

Ողջոյն տամ ամ մէջ ը անուանիւ բում. եւ կնոջ Լոպիտորոսի՝ եւ ամ տան նորա՝ եւ որդւոց նորա.

Ողջոյն տամ Ադրեկյանոսի սիրելւոյ իմոյ. Ողջոյն տամ այնմ եղբօր որ պատրաստեալ է երթալ յՄարիս. եւ եղիցի ը նմա շնորհք ամի, եւ ը պօղիկարպոսի որ առաքեն զնա.

Աղօթեմ՝ զի ողջամբ լինիջիք յամ ժամ ՚ի ՔԻ ՅՍ Տն մեր յորում կայցէք միաբանութե ը այ եւ ընդ եպիսկոպոսի.

Ողջոյն տամ ողկինայ սիրելւոյ իմոյ.

Շնորհք ը ամենեսին ձեզ Ամէն.

Առ Եփեսացիսն.

Գլուխ. Ա.

Ի Գ Ս Ա

ՏԻՈՒՄ ՈՐԼ. Ա.ՅԱ.Օ ԳԻԱՐՑ,

Եկեղեցւոյդ օրհնելոյ մեծութիւն
Ա.Յ ձօր կատարմամբն.

Որ է յԵփեսոս աւետացւոց, որ է
օրհնեալ յՅ̃ծէ լինել հանապազ մնա-
ցական և անփոփոխելի փառօք.

Որ կատարեալ է ճշմարիտ չարչարա-
նօքն ա̃յ և ա̃ն մերոյ Յ̃սի Ք̃սի, որ
արժանի է երանութեան անարատ խըն-



դու-

դուԹբ ՚ի ՚ՔՍ ՅՍ բազում ողջոյն.
՚Քանզի ընդունելի է առիս ողջոյնն
ձեր այվ, և յոյժ սիրելի զոր ըն-
տացեալ էք արդարև անբիծ կամօք
հաւատով և սիրով ՅՍի ՚ՔՍի փրկ
չին մերոյ. և էք նմանօղք այ.
Ի՛ջ զգործս ձեր կատարեցիք սի-
րով. յորժամ լուայք եթէ կապեալ
եմ յասորիս վն անուան համօրէն
հասարակաց յուսոյն, և ակն ունիմ
աղօԹիւք ձերովք գազանակուր լի-
նել ՚ի Հռօմ.
Ի՛ջ յորժամ այսմ արժանաւորիմ և
ժուժկալեմ, յոյս ունիմ լինել աշա
կերտ այ, և դուք ջանացիք հանդու
ցանել զիս.
Արդ զբազմուԹիդ ձեր ընկալայ ՚ի
ձեռն ոնեսիմոսի Եպիսկոպոսի ձե-
րում, որ է առաւելեալ անպատմելի
սիրով. Զ որ աղաչեմ ՅՍիւ ՚ՔՍիւ
սիրել ձեզ զնա. և ամենեքին դուք
նմանեցէք նմա.
Օրհնեալ է ԱՃ՝ որ ետ ձեզ այդ-
 պիսի

պիսի եպիսկոպոս ը՟ս արժանեաց ձե-
րոց. Ա՛յլ վ՟ս Բուրրոսի խորհրդակ-
ցի իմոյ. որ ա՟ծ պաշտօնեայ է ձեր,
և է ա՟մ օրհնեալ այր. կամիմ զնա
յանձն առնել ձեզ, առ ՚ի պատիւ
եպիսկոպոսի ձերում և ձեզ.

Այ՛լ զԿրոկոս՝ որ է արժանի ա՟յ և
ձեզ, ը՟ս նմանութեան սիրոյ ձերում
ընկալայ զնա, և յա՟մ հանգոյց զիս.
Նոյնպէս և զնա հանգուսցէ Հ՟այր
Տ՟ն մերոյ Յ՟սի Ք՟սի, հանդերձ
Ոնեսիմոսիւ և Կենդարոսիւ և
Եւփաթիւ և Փրոնդոնիւ.

Ո է ՚ի ձեռն ն՟ց զձեզ զամենեսին
զսիրելիսդ իմ տեսի, և ուրախ եմ
՚ի ձեզ յա՟մ ժամ եթէ արժանի ի-
ցեմ. Պարտ՛ք է ձեզ յա՟մ ժամ հա՟ն-
գուցանել զՅ՟ս Ք՟ս. որ փառաւո-
րեացն զձեզ կատարեալս լինել
յա՟մ հնազանդութիւնս.



Պօղոսի

Գլուխ Բ.

Արդ հնազանդ լերուք եպիսկոպոսին և քահանայից, զի յամենայնի սուրբ եղիջիք.

Ոչ եթէ ես իցեմ ինչ որ հրամայիցեմ ինչ ձեզ, զի ես թէպէտ և կապեալ վասն ճշմարտութեան անուանն լինիմ, բայց տակաւին ոչ եմ կատարեալ ի Յիսուս Քրիստոս.

Այժմ սկսայ աշակերտ լինել, և խօսիմ ընդ ձեզ իբրև ընդ ուսումնակիցս իմ. Ինձ էր պատշաճ ընդունել ի ձէնջ զհաւատս, և զհամբերութիւն և զխրատ և զերկայնմտութիւն, բայց սէրն ոչ թողու զիս լռել վասն ձեր. Ի փութալ ձեզ ի կամս Աստուծոյ, որպէս և Յիսուս Քրիստոս որ է ճշմարիտ կեանքն մեր՝ ի կամս Հօր.

Այլ և եպիսկոպոսք որ յամենայն տիեզերս ընտրեցան՝ ի Յիսուսի Քրիստոսի կամսն են. Արդ և ձեզ վայելէ փութալ ի բարի կամս եպիսկոպոսաց, որպէս և գործէքդ



իսկ

իսկ։ Նոյնպէս և քահանայք ձեր, ոյք արժանի են անուանն իւրեանց՝ և Այ՟, միաբանեալ ը՟ եպ՟ի իբրև զաղխ քնարի։

Այդ զի միաւորութեամբ ձերով փառաբանի միաբանութիւն սիրոյ ձերոյ ՚ի Ք՟ս Յ՟ս։

Արդ՝ իւրաքանչիւր ոք ՚ի ձէնջ միաբան կացէք, զի յորժամ լինիցիք միամիտք՝ ընկալջիք զնմանութիւն Այ՟։

Այլ միաբան երգեսջիք ՚ի մի ձայն Հօր Տն՟ մերոյ Յս՟ի Ք՟սի. զի լուիցէ ձեզ, և ծանիցէ զձեզ ՚ի բարի վաստակս ձեր։

Այլ զի էք դուք անդամք որդւոյ նր՟ա, պարտ է ձեզ անբիծ միաբանութ՟ հաղորդիլ ընդ Այ՟։

Իսկ եթէ ես փոքր ժամանակաւ այսպէս միաւորութի՟ ունիմ ը՟ եպ՟ի ձերում, ոչ մարմնաւոր, այլ հոգեւոր. որչափ ևս առաւել երանի տամ ձեզ որ խառնեալ էք ը՟ նմա որ՟ եկեղեցի ընդ Յս՟ի Ք՟սի. և որ՟ Յս՟ Ք՟ս

Բա՛ց է Հօր. զի ա՟մ ինչ միաբանութե՟ եղիցի.

Մի՛ ոք խաբեսցէ զանձն իւր. զի թէ ոք ոչ լինիցի 'ի խորանին՝ մերժեալ է 'ի հացէն.

Իսկ եթէ աղօթք միոյ և երկուց՝ այսպէս զօրութի՟ ունի, որչափ ևս առաւել եպ՟ի և ա՟մ Եկղ՟ցւոյ.

Արդ՝ որ ոչ գայցէ 'ի միաբանութի՟, նա հպարտացեալ է մտօք իւրովք. քանզի գրեալ իսկ է, թէ՝ Տէր արհամարհէ զամբարտաւանս.

Փութասցուք մի՛ լինել հակառակ եպ՟ի. զի լինիցիմք հնազանդք ա՟յ.

Եւ յորժամ տեսանեմք զեպ՟ս լռել ևս առաւել պա՛րտ է երկնչել 'ի նմանէ. Զի զոր ոք և առաքեսցէ այր տանուտէր 'ի պէտս իւր, պա՛րտ է ը՟ունել զնա իբրև զառաքիչն իւր.

Ապա պատշաճ է մեզ նայել յեպ՟ս իբրև 'ի Տէր մեր.

 Կ[illegible]

## Գլուխ Գ.

Եւ սորա՝ ինքն Ոնեսիմոս առաւել փառաբանէ զյաջողութիւն ձեր ՚ի Տէր.

Զի ամենքն ճշմարտութեամբ կենդանի՛ էք, և հերձուած խոսյա ՚ի ձեզ ո՛չ բնակէ. և ո՛չ լսիցէք ումեք, եթէ ո՛չ ճշմարտութեամբ վ՟ն Յ՟սի Ք՟սի խօսեսցի ը՟ ձեզ.

Այլ զի սովորութիւն է ոմանց չարաց՝ զբարեաց զգենուլ զանուն և զխերպարան. և արդեամբ գործեն զգործս անպիտանս Ա՟յ.

Պա՛րտ է ձեզ յայնպիսեացն ՚ի բաց կալ լինել ՚ի դիմաց գազանաց.

Քանզի նոքա են շունք կատաղեալք և գաղտառուք որոց վէրք ժանեաց դժուարակիր է ՚ի բժշկութիւն.

Մի է բժիշկ հոգւոց և մարմնոց. անեղանելին և եղականն Ա՟ծ և որդին մարդոյ.

Մինն որ միաւորեցաւ ՚ի վեր քան



զբանս

զբանս եղականաց ճշմարիտ կեանքն
և 'ի մահն կենդանի, և 'ի Մարիա_
մայ և 'ի հօրէ որ չարչարեցաւ վ՟ն
մեր Յս՟ի Քս՟ի տ՟ր մեր.

Ապա՛ միթէ խաբեսցէ զձեզ, ո՟վ և
ո՛չ էք խաբեալ, զի ամենեքին դուք
ա՟յ էք.

Որչափ ո՛չ է անկեալ 'ի ձեզ մի ինչ
'ի ցանկութենց [illegible]ի. որ կարօղնէ տան
ջել զձեզ, ահաւասիկ ա՟վ կեայք.
և ես ուրախ եմ 'ի ձեզ. և հայցեմ
վ՟ն ձեր ո՟վ եփեսացիք.

Ժողովուրդք՝ որ են յա՟մ հեթա_
նոսս. որք մարմնաւորքն են՝ զհո_
գևորս ո՛չ կարեն գործել. և ո՛չ
հոգևորքն՝ զմարմնաւորս.

Ո՟չ և ո՛չ հաւատացեալք զգործս ան
հաւատից, և ո՛չ որք օտարք են 'ի հա
ւատոց զգործս հաւատացելոց.

Բայց դո՛ւք՝ և 'ի մարմնաւորս զհո_
գևորն գործէ՛ք. քանզի զա՟մ ինչ
'ի Քս՟ի Յս՟ի կատարէ՛ք.

Ծանեա՛յ եթէ անցին ոմանք առ

ձեզ, որք ունէին ուսմունս չարս, և ո՛չ թողէք զն͞ս սերմանել ՚ի ձեզ զչար սերմանիսն. այլ խցէք զունկն ձեր, և ոչ ընկալարուք զչար բանս ն͞ց. Քանզի էք դուք վէմք տաճարի հօր ձերոյ ա͞յ, պատրաստեալք ՚ի շինուա՛ծս տաճարի հօգևորի. որ վերանայք ՚ի բարձունս մեքենայիւք խաչին.

Այս է կազմիչ ձեր հաւատքն, և ճանապարհ՝ սէր ձեր, որ հանէ ՚ի բարձունս առ ա͞ծ.

Այս ՚ի մի ճանապարհ ընթանայք ամենեքին, և զգեցեալ էք զա͞ծ, և ըզ սրբութ͞ի ն͞ր. և ամենևին զարդարեալ էք յա͞մ հրամանս Յ͞ի Ք͞ի.

## Գլուխ Գ.

Ցնծամ՝ զի արժանի եղէ խօսել ը͞ն ձեզ. և ուրախ եմ յորում գրեցի առ ձեզ. վ͞ս զի զայլ ոք ո՛չ սիրէք բայց զայն



ոք

դք, որ ա՟ծ կեայ։

Եթէ վ՟ն այլոց ՚ի մարդկանէ աղօթե-ցէք գառնալ առ ա՟ծ. զի գոյ ն՟ց յոյս ապաշխարութե՟։

Աղաչեցէք զն՟ա, զի ՚ի գործս ձեր աշակերտեսցին ձեզ.

Եթէ ը՟ դէմ մեծամեծ բանից նոցա խոնարհութ՟բ կացէք, և ընդդէմ հերձուածոյ ն՟ց աղօթեցէք, և ընդ-դէմ մոլութե՟ նոցա՝ դուք հաստա-տուն կացէք ՚ի հաւատս. և ը՟ դէմ անմտութե՟ ն՟ց՝ դուք հանդարտ կա-ցէք, և մի ջանայցէք նմանիլ նոցա։ Եւ հեզութ՟բ կացէք, և նմանօղք ա՟յ փութացարուք լինել. ո՟չ զի մի գտանիցի ՚ի ձեզ արմատ չարին. այլ զի կայցէք ա՟մ մաքրութ՟բ, և ամօթ խածութ՟բ ՚ի Ք՟ս Յ՟ս, մարմնով և հոգւով։

Ժամանակքն են վերջինք, պատկա-ռեցարուք յերկայնմտութենն ա՟յ. զի մի լինիցի ձեզ այն ՚ի դատաստան։ Երկիցուք եղբարք ՚ի հանդերձեալ-

բարկութեան եւ կամ սրբեսցուք զշը-
նորհս՝ զոր ունիմք յայսմ Ժմի. մի-
այն ՚ի Քս Յս գտանիցիմք ճշմա-
րիտ կենօք.

Մի՛ լիցի ձեզ այլ ինչ հոգայ, բայց
՚ի նմանէ, յիղփս որոյ եւ ես նովին յաւ-
սով կապեալ շրջիմ. որ ոչ են կա-
պանք՝ այլ մարգարիտք հոգեւոյն, զոր
նոքօք տացէ ինձ Ած յառնել ՚ի մե-
ռելոց.

Ջրէ աղօթիւք ձեր եղիցի ինձ, զի
հանապազ հաղորդ քրիստոնէից եփե-
սացւոց գտանիցիմ. որք ըն առ առա-
քելսն էին յամ ժամ զօրութ տն
մերոյ Յսի Քսի.

Գիտեմ թէ ո՞վ եմ, կամ ո՞ւմ գը-
րեմ, ես՝ դատապարտ՝ եւ ՚ի վր ձեր
ողորմութի եղեւ. ես ընդ տագնա-
պաւ՝ եւ դուք հաստատեալք.

Դու ձեզ ճանապարհորդքն որք վն
այ նահատակին.

Դասուք էք խորհրդակիցք սրբյն Պօ-
ղոսի, որ ունի վերանութեանցն վկայ-

ութի

ութի. որում տայէ ինձ Տր գտա_նել ՚ի ներքոյ պատուանդանի ոտից նր, յորժամ գտանիցիմ այ.

Տրդ յամ թուղթս իմ յիշեմ զձեզ ՚ի Քս Յս.

## Գլուխ Լ.

Ստէպ կացէք յամ ժամ ժո_ղովիլ ձեզ ՚ի գոհութիւն և ՚ի փառս. քանզի ՚ի ձեռուն միաբա_նութէդ և ՚ի հաւատոցդ տկարանայ զօրութիւն սատանայի, և եղծանի յն շատակ նորա.

Չիք ինչ առաւել քան զհաւատ՝ և զխաղաղութի. որով խափանին ամ պատերազմունք երկնաւորաց և երկ_րաւորաց. որոց չիք ինչ մոռացեալ ՚ի ձէնջ, եթէ ունիցիք կատարելա_պէս ՚ի ձեզ զՔս Յս.

Հաւատք և սէր են սկիզբն և կա_տարումն. հաւատք սկիզբն և սէր կատարումն.

Այն յորժամ երկոքին սոքա լինին ՚ի միասին, անդ է և ԱՅ, և այլ ամ բարի գործք և առաքինութիւնք.

Չի՛ք ոք՝ որ խոստանայ ունել հաւատս և մեղանչէ. և ոչ որ ըստացեալ է սէր՝ և ատեայ. վ՟ն զի ծառն ՚ի պտղոյ անտի իւրոյ ճանաչի. այսպէս՝ և որք խոստանան Ք՟ի լինել՝ ՚ի գործոց իւրեանց ճանաչին.

Ո՛չ է բարուոք խոստանալ ունել գործս միայն առանց արդեանց, և զօրութե հաւատոց մինչև ՚ի կատարումն. Բարուոք է եթէ իցէ ինչ ոք՝ և լռիցէ, քան եթէ ոչ ինչ իցէ՝ և խօսեսցի.

Բարուոքէ ուսուցանել զայն ինչ՝ զոր և գործիցէ նախ ինքն, և ապա ասիցէ.

Ո՛վ է ուսուցիչն որ առնէ՝ և ասէ, և լռութբ գործէ զարժանիս փոր իւրոյ.

Դժուարին զօրաւոր է, որ ստացեալ է զբանն Յ՟ի, և ունիցին զնէ՛ հեզու-

 թե

Թէ Ն՟ր, լինել կատարեալ, զի որով
խօսեսցի՝ գործեսցէ, և որով լը-
ռեսցէ՝ ծանիցէ։

Չի՛ք ինչ մոռացեալ ՚ի Տ՟նէ, այլ և
ծածուկք մեր յայտնի՛ են նմա։

Ո՛ զա՟մ ինչ այսպէս գործեսցուք, իբ-
րու՝ թէ ՚ի մեզ իցէ բնակեալ նա։
ո՟պ զի եղիցուք տաճար Ն՟ր, և նա ե-
ղիցի մեր Ա՟Ծ, եթէ արդարութ՟բ
սիրիցեմք զնա։

Մ՟ի խաբիք եղբարք, որք սիրեն
զինչս՝ զաղքատութ՟ին ա՟յ ոչ ժառան-
գեն։

Իսկ եթէ որք զայսպիսին գործեն
մեռանին, որչափ ևս առաւել՝ որք
չար ուսմամբ զհաւատն ա՟յ ապակա-
նեն. վ՟ա ո՟րն փառաց Յ՟ս Ք՟ս
խաչեցաւ։

Բայց որ զայսպիսին ուրանայ՝ յան-
շէջ հուրն առաքի՛, նա՛ և լսօղ Ն՟ր.
Ա՟յնո՟րկ զիւ-զն անոյշ ընկալաւ-
ո՟րն մեր ՚ի վ՟ր գլխոյ իւրում, զի
յանապականն հոտ անուշից ածցէ զե-

 կեղե

կեղեցի իւր։

Որդ՝ մի՛ օծանիք ՚ի ձեզ զհոտ չարութեան իշխանի աշխարհիս այսորիկ, զի մի՛ որոշեսցէ զձեզ ՚ի խոստացեալ կենացն։

Առ այնորիկ զգիտութիւն այ ընկալայք՝ որ է Յս Քս։

Եւ ընդէ՞ր կորնչիմք յիմարաբար և զի ոչ պարտաւորիմք ՚ի շնորհացն եթէ հաւատամք եթէ ճշմարտապէս չարչարեցաւ Տր Յս մեր։

Երկիրպագանեմ հոգիս իմ խաչին, որ է գայթակղութիւն անհաւատից. այլ ձեզ հաւատացելոցդ փրկութիւն և կեանք յաւիտենականք։

Ո՞ւր է իմաստունն, ո՞ւր է քննիչն, ո՞ւր է այն՝ որ պարծին յաշխարհական զգօնութիւնս։

## Գլուխ Ձ.

Աջ մեր Յս՟ Քս՟ յղացաւ ՚ի Մարիամայ՝ (անտեսութե՟այ հօր, և ծնաւ ՚ի հոգւոյն սբյ՟) ՚ի շառաւիղէ Դաւթի, և մկրտեցաւ առ ՚ի մաքրել զջրոցն ապականութի.

Այլ ծածկեցաւ յիշխանէ աշխարհիս կուսութին Մարիամու, և ծննդ ն՟ր. այլ և մահն Տեառն.

Երիս խորհուրդս հնչման զարմանալիս գործեցան խոնարհութեն ա՟յ.

Թէ որպէս ծանուցաւ յ՟ջի աստղն՝ որ ծագեաց յերկինս, որ առաւել էր քան զա՟մ աստեղս.

Այլ թէ՝ ո՞ր անպատմելի էր լոյս ն՟ր, և զի՝ օտար էր տեսիլ նորա.

Այլ զի՝ ա՟մ աստեղք հանդերձ արեգակամբ և լուսնիւ. երբև գունդ եղեն աստեղն այն. վ՟ս զի՝ լոյս ն՟ր առաւել էր քան զամենեսին.

Այլ եղև աղաղակ՝ եթէ ուստի՞ նորոգութին ն՟ր, որ ոչ է նման այլոցն.

Այլ յայսմանէ լուծանէր ա̃մ կախար-
դութի̃ աստեղագիտացն, և պատ-
րանք չարին սպառէր. և հին թա-
գաւորութի̃ն քակէր յայտնութե̃ն
ա̃յ. Որ մարմնացաւ առ ՚ի կեանս
նոր յաւիտենից. որ եղև սկիզբն
ա̃մի՝ որ ա̃վ կատարի.

Յայսմանէ զարհուրեցաւ ա̃մ ինչ
՚ի միասին, վ̃ս զի լուծումն մահու
կատարէր.

Այլ եթէ արժանի արասցէ զիս Տ̃ր
իմ Յ̃ս Ք̃ս ը̃ս կամաց իւրոց ՚ի
միւսում թղթին՝ զոր գրեմ առ ձեզ,
ծանուցանեմ ձեզ վ̃ս տնօրէնութե̃
խորհրդոյն՝ յոր սկսայ ՚ի նոր մարդն
որ է Յ̃ս Ք̃ս. հաւատովք և սի-
րով նորա, չարչարանօք և յարու-
թեամբ նորա.

Այլ առաւել եթէ յայտնեսցէ ինձ
Տ̃ր, ասացից՝ եթէ իւրաքանչիւրոք
՚ի ձէնջ ՚ի միասին ժողովիցիք շնոր-
հօք և միով հաւատով Յ̃սի Ք̃սի.
որ եղև ՚ի մարմնի ՚ի զաւակէ դաւ-
թի,

Թի, որ է որդի մարդոյ՝ և որդի այ․
Այլ որդ՝ ունկնդիր լերուք եպսն
և երիցանց ուղիղ մտօք․
Այլ հանապազ բեկանեսջիք զմի հաց
որ է դեղ կենաց․ զի որ առնուցու
զնա սրբութեամբ՝ ոչ մեռանիցի, այլ
կեայ մշտ ՚ի ձեռն Յսի Քսի․
Ընծայ եմ՝ փոխանակ անձանց ձերոց
եղիցի եղբարք և զոր ինչ առաքեցիք
ինձ ՚ի զմիւռնիայ՝ ընկալայ․ զի անտի
գրեցի առ ձեզ․
Գոհանամ զայ, և սիրեմ զՊօղի-
կարպոս․ յիշեցէք զիս հանապազ․ ոպ
և զձեզ տր մեր Յսի Քսի․
Աղօթս արարէք վս եկեղեցւոյն ա-
սորւոց, զի անտի կապեալ վարիմ
՚ի Հռովմ իբրև զհաւատարիմ առա-
քեալ որ է անդ եթէ դատանիցիմ ՚ի
պատիւ այ․
Ողջ լերուք յԱծ հայր Տն մերոյ
Յսի Քսի յոյսն ամենեցուն
Շնորհք ը ձեզ ամէն․

Առ Մանիսիացիսն․

Գլուխ․ Ա։

ԻԳՆԱ

ՏԻՈՍ ՈՐ և ԱՍՏՈՒԱԾԱԶԳԵԱՑ,

Եկեղեցւոյդ օրհնեալ 'ի շնորհացն Այ Հօր՝ Մանիսիաս որ է մերձ 'ի Մէնանդրոս գետն՝ բազում ողջոյն 'ի Քս Յս 'ի Տէր մեր։

Աղօթեմ վս ձեր առ Այ Հայր տն մերոյ Յսի Քսի։

Յորմէհետէ գիտացի զհաստատութիւն

սերդ ձեր, 'ի գնացս իմ խորհեցայ
հաւատով Յսի Քսի խօսիլ ը̅ ձեզ.
Քանզի արժանացեալ Ա̂ծավայե–
լուչ անուանդ կապիւքն որովք շր
ջիմ՝ օրհնեմ զեկեղեցիսն.

Յորս միութիւն ըղձամ մարմնոյ և
հոգւոյն Յսի Քսի հանապազակա–
նի մերոյ կենացն. հաւատոյն և սի–
րոյն, որ քան զայն միութիւն չիք նա–
խամեծար.

Իսկ՝ տերագոյնն Յսի Քսի և Հօրն
որով համբերելով 'ի յա̄մ փորձու–
թեց իշխանի Տիս այսորիկ փախու–
ցեալք՝ առ ԱԾ սպասեմք.

Ա̂յ որդ՝ արժանացայ տեսանել զձեզ
'ի ձեռն Դամասի արժանի Այ՝ ձեր
եպիսկոպոսի.

Ա̂յ արժանաւոր քահանայից բասսոսի
և Ապողոնիոսի, և ծառայակցին ի–
մոյ պաշտօնէին Սօտիոնի.

Որոյ ես փափաքեմ, զի հնազանդի
եպսին որպ շնորհաց Այ, և քահանայ
ից երբև օրինացն Քսի.

Սուրբ՝ և ձեզ պատշաճ է մի՛ նայել
յամս եպս̃ի ձերոյ, այլ ՚ի գործոու-
թիւնն նր̃յ.

Այլ հաստուցէք նմա պատիւ ըս̃ ար-
ժանեաց, ոպ̃ և ուսայ ՚ի ս̃ր հ̃ր քահա
նայից ձերոց.

Որ ոչ նային յերևելի հասակս ման-
կութե̃ն նր̃. այլ՝ իբրև իմաստուն
սան հնազանդին նմա.

Այլ ոչ նմա միայն, այլ և Հօր Տ̃ն
մերոյ Յ̃սի Ք̃սի, որ է եպսկ̃պս
՚ի վերայ ամենայնի.

Զի եթէ նա հանձեցաւ ՚ի պատիւ
նր̃, և ձեզ արժան է լսել նմա առանց
կեղծաւորութե̃.

Այլ որ արհամարհել կամի՛ ոչ թէ
զերևելի եպսկ̃պս արհամարհէ՝ այլ
զաներևոյթն.

Այլ արհամարհք այսոցիկ ոչ է՛ առ
մարդ մարմնաւոր, այլ առ Ա̃յ ծած
կագէտ.

Պարտ է՛ մեզ՝ ոչ միայն անուամբ
կոչիլ քրիստոնեայս, այլ և գործովք.

Այն ոմանք որ անուամբ կոչին քրիս-
տոնեայ, և առանց նորա գործեն
զամենայն ինչ։

Այլ որք այսպէսն խորհին, համա-
րիմ թէ՝ ոչ ունին միտք բարուք.
քանզի և ո՛չ ՚ի հրամանս այ ժողովին։

Պարտ է իմանալ թէ ամ իւրաց վախ-
ճան գոյ, և մահ՝ և կեանք, սոքա
երկոքեան եդեալ են ՚ի միասին, և
ամ մարդ զպատրաստեալ տեղին իւր
ընկալցի։

Ո որ օրինակ՝ եթէ իցեն, բ, դահե-
կան, մինն այ, և միւսն աշխարհի,
և իւրաքանչիւրոք ՚ի նոցանէ զպատ-
կեր իւր առանձին ցուցանէ։

Այսպս և որք ոչ ունին ուղիղ հա-
ւատս, պատկեր իշխանի չրիս են։
Իսկ՝ որ ստոյգ հաւատացեալքն են
սիրով՝ պատկեր են հօր այ ՚ի ձեռն
Յսի Քսի։

Այլ եթէ ո՛չ կամիմք չարչարիլ և մե-
ռանիլ վս անուան նր, զկեանս նր
ոչ ունիմք յանձինս։

## Գլուխ Ի·

Եւ վս զի յառաջագոյն զոր գրեցի վս եպսի՝ և երիցանց և սարկաւագաց՝ ուսեալ զամ ժողով ձեր լի ոք հաւատովք և սիրով· Այլ խնդրեմ 'ի ձէնջ, զի միաբանութբ և ամ գործիցէք զամ ինչ· և նստցի եպիսկոպոսն 'ի գլուխս ձեր իբրև զԱյ, և քահանայք իբրև զհրեշտակս Թագաւորի, և սարկաւագունք 'ի կերպարանս առաքելոց ոյք յոյժ սիրեցեալքն են իմ, որ հաւատարիմքն են սպասուցն յսի քսի· Որ մշտնջենաւոր էր առ Հայր· և 'ի վախճան ժամանակացս երևեցաւ մարմնով·

Արդ՝ և դուք ամենեքին առէք 'ի ձեզ զնմանութիւն այ, և զմիաբանութի· և պատկառեցէք 'ի միմեանց. և մի' նայիք 'ի միմեանս մարմնապս, այլ սիրով Յսի Քսի·

Այլ մի գտցին առ ձեզ պատճառք

բաժանման, և հաւանեցարուք եպիս կոպոսի. որ նստի 'ի գլուխ ձեր, 'ի տեսութիւն բարի և յուսումն անա պականութեան.

Ով եղբարք մեր որ ոչ գործէր ինչ՝ առանց հօր՝ և ոչ անձամբ՝ այլ կա մօք հօր 'ի ձեռն առաքելոցն.

Նոյնպէս և դուք մի՛ գործէք ինչ ա ռանց եպիսկոպոսի և քահանայից, և մի փորձելով փորձէք տեսանել ինչ պատշաճաւոր իւրաքանչիւր ոք 'ի ձէնջ յանձնէ.

Այլ 'ի միասին եղիցին ձեր միաղօթք մի պաղատանք, մի միտք, մի խոր հուրդ, և մի յոյս սիրով Տն մերոյ Յսի Քսի. վս զի չիք ինչ առա ւել քան զնա.

Ամենեքեին դուք իբրև 'ի մի տաճար ընթացարուք. և 'ի մի խորան՝ առ մի Տր Յս Քս. որ 'ի մի հօրէ ել. և առ մի եհաս.

Այլ մի մոլորիք յօտար ուսմունս, 'ի հին և 'ի նոր առասպելս, որ ոչ ինչ օգուտ են ձեզ.

 Վասն

## Գլուխ Գ.

ԲԱՅՑ արդ՝ եւ յորժամ ծանեաք զճշմարտութիւն, եւ ըստ հրէական օրինացն վարիք՝ խոստովանելի է՝ եթէ զշնորհն Այ՝ ոչ ընկալաք.

Մարգարէքն՝ որք առաքեցան յԱյ, ՚ի Քսէ Յսէ հանգեան.

Նաեւ վն այնորիկ հալածեցան զի զհոգի շնորհաց զգեցեալք էին առ ՚ի ստուգել ապստամբաց, եթէ գոյ մի Աստուած որ յայտնեցաւ ՚ի ձեռն Յսի Քսի.

Որ է բան ելեալ ՚ի լռութէ, որ ամ ինչ հաճոյ եղեւ այնմ որ առաքեացն զնա. Իսկ՝ եթէ որք նախ շրջեցան ՚ի գործս հինս եւ եկին յայս ուրախութիւն, այժմ ոչ պահեն զշաբաթս, այլ զկիրակէ օր տր եւ առաջին, յորում ծագեաց մեզ կեանքն ՚ի ձեռն մահուան տն մերոյ Յսի Քսի, զոր ոմանք ուրանան.

Խորհրդով ընկալայք զհաւատս, և վ՟նն համբերեմք չարչարանաց. զի գտանիցիմք աշակերտք Յ՟ի Ք՟ի, որ նա միայն է վարդապետ մեր.

Եթէ ոչ մարթ կարիցեմք կալ առանց Ն՟ր, զոր և մարգարէքն Թէպէտ և աշակերտք էին հոգւոյն Ն՟էյ, բայց նմա ակն ունէին իբրև վ՟րդ՟պտի.

Եթէ քանզի արդարութ՟ե ասպասէին նմա, յորժամ եկն և յարոյց զն՟ս 'ի մեռելոց.

Արդ՝ 'ի միտ առցուք զքաղցրութ՟ի նորա, և նմանեսցուք նմա, որպէս և նա՛ մեզ, և ուսցուք զհոգին քրիս-տոնէապէս.

Իսկ՝ որ այլ անուամբ կոչի բաց 'ի նը-մանէ՝ նա ոչ է Ա՟յ.

Ի բաց արարէք այսուհետև 'ի ձէնջ զհին խմորն չարութեան որ քացա-խացեալ է ապականութ՟բ, և փոխեցա-րուք 'ի նոր զանգուած որ է Յ՟ս Ք՟ս. Եթէ յարեցարուք 'ի նմա, զի մի ինքնապականեսցի ձեզ, և դատաստ-

 ուրա

արանկեցարուք 'ի հոգւոյ նր՟։

Ո՛չէ արժան ուր Յի՟ Քի՟ պատմի հրեաբար կեալ. զի ոչ եթէ հաւատ քրիստոնէութի՟ 'ի հրէութիւնն, այլ հրէութի՟ 'ի քրիստոնէութի՟. եւ ամ՟ որ հաւատայ 'ի նա՝ առ Ա՟Ծ ժողովի.

## Գլուխ. Դ.

Այս գրեմ առ ձեզ սիրելիք իմ, ոչ թէ գիտեմ ինչ զոք 'ի ձէնջ՝ որ այսպէս վարի. Այլ զի փոքր 'ի շատէ յառաջագոյն զգուշացուցանեմ զձեզ, զի մի՛ անկանիցիք յորոգայթս սնափառութե՟. Այլ հաստատեցարուք մերոտին ծննդեամբն եւ չարչարանօքն եւ յարութե՟ն. Որ եղեւ յամս պօնտացւոյ պիղատոսի դատաւորի, եւ գործեցաւ այս ճշմարտապէս 'ի տէր մեր Յի՟ Քի՟ յոյսն մեր. որ քաւ լիցի մեզ 'ի բաց դառնալ 'ի նմանէ.



Ու

Ուրախ եմ ՚ի ձեզ յամ ինչ, միայն թէ արժանի իցեմ. զի թէպէտ և կապեալ իցեմ, սակայն իբրև զմի ՚ի ձէնջ յարձակելոց ոչ եմ.

Գիտեմ՝ զի ոչ հպարտանայք, զի Յս Քս ՚ի ձեզ է. և յորժամ գովեմ զձեզ, գիտեմ՝ զի ևս առաւել պատկառիք. որպ և գրեալ է, թէ արդարն ինքնին խրատէ զանձն իւր. փութացարուք հաստատել յուխտս Տն և առաքելոց նր, զի յամ գործս ձեր պայծառասջիք հոգւով և մարմնով:

Հաւատով և սիրով Հօր և որդւոյ և Հոգւոյն սբյ, ՚ի սկիզբն և ՚ի կատարումն, հանդերձ եպսկպսաց-ձերով. որ արժանի է գովեստի. և հոգևորական պսակի. քահանայական դասուն ձերոյ, և պաշտօնէիւք ձերովք, որք են ած.

Եպսի և միմեանց հնազանդ լերուք, որպ և Յս Քս Հօր, և որպէս առաքեալքն Յսի Քսի և Հօր, զի ե-



զի

ղեցի միաբանութեան հոգւով և մարմնով։ Գոհանամ զի լի էք շնորհօքն Աստուծոյ, և վասն վստահութեամբ խնդրեմ ՚ի ձէնջ. Յիշեցէք զիս յաղօթս ձեր, զի արժանի լինիցիմ Աստուծոյ և եկեղեցւոյն ասորւոց.

Նաև ոչ եմ արժանի անուն անուանել, կարօտ եմ միաբանութեան սիրոյ ձերոյ և աղօթից. Արժանի լեցի և եկեղեցին ասորւոց, ցօղել ՚ի նմա աղօթք ձեր և հաստատութիւն. Ողջոյն տան ձեզ եփեսացիք ՚ի զմիւռնիայէ զի անուն գրեցի առ ձեզ, որք եկեալն էն ՚ի փառս Աստուծոյ, որպէս և դուք. Որև՝ ամենայնի հանգուցին զհոգի իմ իբրև զպօղիկարպոս եպիսկոպոս զմիւռնացւոց: Նաև՝ այլ եկեղեցիք պատուեալք Յիսուսի Քրիստոսի ողջոյն տան ձեզ, ողջ լերուք միաւորութեամբ Աստուծոյ, և ստանալով առանց բաժանման հոգի որ է Յիսուս Քրիստոս, ողջ լերուք եղբարք Ամէն.

## Առ Տրալլիանոսացիս.

### Գլուխ. Ա.

ԻԳՆԱՏԻՈՍ ՈՐԴ, ԱԾԱԶԳԵԱՑ,
Եկեղեցւոյդ սիրեցելոյ յԱյ Հօր
եւ Տն մերոյ Յսի Քսի, որ է ՚ի Տը
րալլիանոս քաղաք Ասիացւոց.
Ընտրելոյ եւ արժանի Այ. եւ կատա-
րելոյ ճշմարիտ մարմնով եւ արեամբ
տն մերոյ յսի. քսի եւ յարութե նորին.
Որում ողջոյն տամ լրմամբ եւ նմանու

 Թե

թբ առաքելութե, և աղօթեմ զի
բազմասցի ողջոյն ձեր անբիծ և ա-
ներկեան մօք.

Շռանեսց վն ձեր՝ թէ համբերու-
թի մեծ ստացեալ ունիք յանձինս,
ոչ ըունայնութբ, այլ մտաւոր ի-
մաստութբ. որպ ծանոյց ինձ Պօղ-
բուոս եպիսկպս ձեր, որ եկն առ իս
'ի զմիւռնիա կամօք Տն մերոյ Յսի
Քսի. Այլ այնպս ցնծացեալ բեր-
կրեցաւ ըիս 'ի կապանս իմ, որ 'ի
Քսն Յսն, որ և զամ ժողովդ ձեր՝
նովաւ տեսի.

Այլ ծանուցեալ զբարուոք միտս ձեր.
որ է ած 'ի ձեռն նր փառաւորե-
ցի զտրն իմ Յս Քս. զի այնպս
գտայք նմանօղք նյ՝ որպ և ուսայք.
Զի յորժամ հնազանդիք եպիսկպսի
իբրև Յսի Քսի, երևիք ինձ եթէ
ոչ 'ի մարմնի կայք, այլ 'ի տէր Յս
Քս որ մեռաւ վն մեր.

Այլ յորժամ հաւատայք զծնունդ-
նր և զմահն, ազատեալ էք 'ի մահ-

ռեանն ։

Նորոգք է ձեզ չգործել ինչ ա-
ռանց եպիսկպսի, այլ և առնէքդ իսկ.
Հնազանդ լերուք և քհնյից, իբրև
առաքելոց քսի. զի գտանիցին կեանք
ձեր նոքօք ։

Պատշաճ է և սրկւգց հնազանդիլ,
որ են խորհրդակիցք Յսի Քսի,
և յամի հաճոյ լինին այ և մարդկան։
Զի ոչ եթէ կերակրոց և ըմպել-
եաց են սպասաւորք, այլ եկեղեց-
ւոյ այ. և վս այնորիկ պարտ է նց
զգուշանալ ի մեղաց իբրև ի հրոյ.
Եւ ամ ոք ամաչեսցէ ի սարկաւա-
գաց իբրև Յսէ Քսէ. և յեպիսկո-
պոսէ իբրև ի հօրէ այ. և ի քահա-
նայից իբրև ի խորհրդակցաց այ, և
ի կարգակցաց առաքելոցն. վս զի
բաց յայսցանէ ոչ անուանի եկղցի.
Պիտեմ՝ զի և դուք այսպէս ունիք
և զկերպարանս սիրոյ ձերում ընկա-
լայ, որ կատարեալ է յեպիսկպս ձեր
որոյ յաջողութիւն մեծ աշակերտու-

թիւն է, և հեզութիւն զօրութիւն.
Համարիմ՝ եթէ և որ անձինքն են
պատկառելին ՚ի նոցանէ.

Այո՛՝ վասն զի սիրեմ զձեզ՝ խնայեմ
՚ի ձեզ գրել հզօրապէս և փառաւո-
րել. Այլև՝ ոչ եմ բաւական իբրև
զառաքեալ հրամայել ձեզ, վասն զի
այր մի դատապարտեալ եմ.

Բազում ինչ խորհիմ յԱստուածայինսն,
այլ սահմանեմ զանձն իմ, զի մի պար-
ծելով կորնչեցիմ.

Այժմ պարտ է ինձ առաւել. երկնչել
և ոչ նայել յայնոսիկ որք կարծինն
ապաքինել զիս.

## Գլուխ Ե.

Արդ՝ սիրեմ չարչարիլ, բայց
ոչ գիտեմ թէ արժանի ի-
ցեմ. Նախանձ ոչ բազմաց երևի,
բայց ընդ իս մարտ ունի, բարւոք է
խոնարհութիւն, վասն զի նովաւ լուծա-
նի իշխան աշխարհի այսորիկ.

Կարօղ եմ գրել ձեզ զբարձրագոյն սրն և զերկնայինսն. բայց երկնչիմ գուցէ զրկումն ինչ լինիցի ձեզ.

Գիտեմ յանձնէ իմմէ և զգուշանամ, ոչ մի զի կապեալ եմ.

Ոչ բաւական եմ գիտել զերկնաւորսն, և զդասս հրեշտակաց՝ և զիշխանութիւնս՝ և զպետութիւնս, և զերևելիս՝ և զաներևոյթս.

Ոչ մի այնուորիկ եղէ աշակերտ. այլ զի յոյժ պակասեալ եմ 'ի նմանութէն այ.

Արդ՝ խնդրեմ 'ի ձէնջ եղբարք, ոչ ես՝ այլ սէրն Տն մերոյ Յսի Քսի՝ 'ի Թոշակէ քրիստոնէութե միայն կերակրեսջիք, և յօտար արդեանց հեռասջիք՝ որ են հերեսի ովտայք.

Արդ՝ խառնակեն զանձինս իւնց ընդ Յսի Քսի, զի զպարզամիտսն հաւատացուսցեն.

Զոր օրինակ այնոքիկ որ խառնեն զդեղ մահու ընդ մեղեր. զի զորս



ոչն

ոչն ճանաչէն, ցանկութեան զմահն
ընկալցին։

Արդ՝ զգուշ լերուք յայնպիսեացն, և այս լինիցի ձեզ՝ յորժամ ոչ հակառակիցէք և ոչ հեռանայցէք ՚ի Յիսուսէ Քրիստոսէ և յառաջելոց նորա և յեպիսկոպոսէ ձերմէ.

Ո ի ամ որ է ՚ի ներքոյ խորանին, մաքուր է մտօք.

Այլ որ գործէ ինչ առանց եպիսկոպոսի և քահանայից՝ անսուրբ է սրտիւն։

Ոչ եթէ գիտեմ եթէ գոյ այսպիսի ինչ առ ձեզ, այլ կանխաւ զգուշացուցանեմ զձեզ. քանզի սիրելիք իմ էք՝ և տեսանեմ զմեքենաւոր հնարս սատանայի։

## Գլուխ Գ.

Արդ՝ դուք առէք ձեզ զխոնարհութիւն, և զհեզութիւն և հանգուցէք զանձինս ձեր հաւատով և յուսով և խրախճանութեամբ արեանն Քրիստոսի.

 Այլ

Այլ մի՛ ոք ՚ի ձեռնէ կալցի խեթ զեղ-բօրէն, զի մի՛ ինչ տայցէք պատճառս հեթանոսաց։

Գուցէ ՚ի ձեռն դիւրագրգռելոց և անմտաց՝ բազում ծաղրաւորդք այ̄ անարգեսցին։

Աղէրուք բերել զհամրս յամի զոր խօսիցի ոք, բայց ՚ի Յսէ Քսէ։

Որ եղև յազգէ դաւթի, և ՚ի կու-սէն Մարիամայ, և եկեր և արբ ճըշ-մարտապէս։

Այլ ստուգապէս չարչարեցաւ յա-ւուրս պօնտացւոյ Պիղատոսի։

Այլ խաչեցաւ և մեռաւ յանդիման երկնաւորաց և երկրաւորաց։

Այլ որ ՚ի ներքոյ են քան զերկիր, և ճշմարտապէս յարեաւ ՚ի մեռելոց՝ և որ յարոյց զնա հայր։

Նոյնպէս և զմեզ զհաւատացեալքս ՚ի նա՝ ըստ նմին օրինակի յարուսցէ, առանց որոյ չէք ուրուք կեալ զճըշ-մարիտ կեանս։

Իսկ՝ ապա թէ ոմ̄ ասեն անհաւատ



քըն

քըն. եթէ կարծեօք իմն չարչարե-
ցան Տ՟ն, որ ինքեանք են կարծիք.
Ապա՝ և ընդէ՞ր արդեօք ես կապ-
եալ լիցեմ, և ընդէ՞ր աղօթիցեմ գա-
զանակուր լինել.
Ապա ուրեմն ձրի մեռանիցիմ ես,
և սուտ ասիցեմ զՏ՟նէ՝ քա՛ւ լիցի.
Փախերուք եղբարք յայնպիսեաց
բուսոց չարեաց, յորմէ ծնանին ար
դիւնք մահու և որք ճաշակեն զնո՟
վաղվաղակի մեռանին.
Այնոքիկ ոչ են ՚ի տնկոյն Հօր,
քանզի եթէ էին արդեօք, թե-
րեւս լինէին և երևէին
նոքա ոստք խաչին,
և պտուղ նոցա
անապական.



Գլուխ Գ.

Արդ՝ նշանաւ խաչին Տ̃ն մե-
րոյ՝ դուք անդամք էք նո-
րա, և ոչ կարէ գլուխ թշնամի լինել
անդամոց։

 Մ̃

Վասն զի Տ՟Է խոստացաւ զմիաբա-նութիւն մեր ը՟ իւր՝ երբեք զմի մար-մին. Ողջոյն տամ ձեզ ՚ի զմիւռնի-այէ հանդերձ եկեղեցեաւք ա՟յ՝ որ է առ ձեզ.

Որ և յոյժ հանգուցին զիս մարմ-նով և հոգւով.

Խնդրեմ ՚ի ձէնջ և կապանքս իմ, որ վ՟ Յ՟ի Ք՟ի.

Իբրու՝ զի արժանիք լինել ա՟յ, կա-ցէք միաբանութ՟բ և աղօթիւք ընդ միմեանս.

Պատշաճէ ձեզ ամենեցունց և ա-ռաւել քահանայից հանգուցանել զեպ՟սկ՟պս ձեր ՚ի պատիւ հօր՝ և մի-ածնի նր՟ Տ՟ն մերոյ Յ՟սի Ք՟սի՝ և Յբ առաքելոցն.

Աղօթս առնեմ ձեզ սիրով՝ լու-ռուք ինձ, զի մի՛ լիցի ձեզ ՚ի վկայու-թիւն, զոր ինչ գրեցի ձեզ. այլ և դուք աղօթս արարէք ինձ.

Քանզի կարօտ եմ սիրոյդ ձերոյ, իբրու զի ողորմութ՟ն ա՟յ արժանի լի-



նի

նչցիմ ընդունել զվիճակս յորս կոչե-
ցայ․ և մի՛ գտանիցիմ խոտան․

Ողջոյն տայցեն ձեզ սէր զմիւռնաց-
ւոց և եփեսացւոց․

Յիշեցէք յաղօթս զեկեղեցին ասոր-
ւոց, որոյ ո՛չ եմ արժանի կոչել ա-
ռաքեալ․

Ողջ լերուք ՚ի տր Յս Քս, և հա-
ւանեցարուք Եպիսկոպոսի իբրև հրա-
մանի այ․ այնպէս և քահանայից՝ և սի-
րեցէք զմիմեանս ողջամիտ սրտիւ․

Փափաքի առ ձեզ եղբարք հոգի իմ,
ոչ այժմ միայն, այլ և՝ յորժամ ար-
ժանի լինիցիմ այ․

Այժմ տակաւին ՚ի տագնապի եմ,
բայց հաւատացեալ եմ ՚ի հայր Տն
մերոյ Յսի Քսի․

Եթէ կատարեսցէ զխնդրուածս
իմ և զձերդ, և նովաւ գտանիցուք
անբիծք․

Շնորհք ընդ ձեզ ընդ
ամենեսեանսդ Ամէն

## Առ Փիլիպպեցիս.

### Գլուխ. Ա.

ԵՊԻՍ
ՏԻՄՈ ՈՐԴ. ՄԾՀ.Օ,
գեաց Եկեղեցւոյդ ա͞յ Հօր և Յ͞սի
Ք͞սի Տ͞ն մերոյ.

Որք ՚ի Փիլիպպեցիս քաղաք աւե-
ացւոց որ գթութե͞ն ա͞յ ճշմարտեալ
է միաբանութե͞.

Այս ցնծայ սիրով ՚ի չարչարանս և
՚ի

՚ի յարութեն քսի, և քաջալերեալ է
յուսով, և բազում ողորմութեամբ.
Որոյ ողջոյն տամ արեամբն յսի քսի,
որ է մշտնջենաւոր ուրախութի, և
մեայ յաւիտեանս.
Այժմ աղաւել եթէ կայցէք ՚ի միա-
բանութեն եպսկպսի և քահանայից
և սարկաւագաց. որ ընտրեցան կա-
մօքն Յսի Քսի, որ եւ զմեզ վե-
րակացուս անփոփոխելի հոգւոյն
իւրով.
Ով այս եպս զոր ստուգեալ ծան-
եայ՝ որ ոչ յանձնէ՝ և ոչ ՚ի մարդ-
կանէ, և ոչ ՚ի փառասիրութէ ընկա-
լաւ զպաշտօնութեն՝ որ վայելէ հա-
սարակաց մարդոյ, այլ սիրովն այ
հօր և տն մերոյ Յսի Քսի.
Այժմ ես յոյժ զարմացեալ եմ ը հե-
զութեն նր, որ լռութբ ՚ի վեր է
քան զբանաւորս.
Հաւաժկալեալ է և միաբանեալ է հր-
ամանաց Այ՝ իբրև զաղիս քը-
նարի. Սնկ տացէ անձն իմ երանի

 Նա

Ձայնոց մտաց Տր̃. քանզի գիտեմ
եթէ կատարեալ է նա.
Ով ոչ երբեք պղտորի և բարկանայ՝
այլ կեայ ամ̃ խոնարհութբ՛ ամ̃լ.
Որդ՝ եղուք որդիք լուսոյ և ճըշ-
մարտութե՛ն, փախերուք յամ̃ հերձ-
ուածոց և ՚ի չարաչար ուսմանց.
Ով ուր և իցէ հովիւն ուղղափառ՝
զհետ նորա գնացէք իբրև զխաչին
սրբոյ.
Քանզի բաղում գայլք գոն՝ որք հը
պարուացեալ խորհին չարաչարս. և
ցանկան խոտորել զընթացս քուլթա
ցողացն ՚ի ճանապարհս այ̃.
Բայց ՚ի միաբանութիւնս ձեր՝ չիք
ինչ նոցա տեղի.
Որդ՝ հեռի լերուք ՚ի չար արմատոց
անտի զոր տէր մեր Յս̃ Քս̃ ոչ է
տնկեալ.
Ով եթէ հերձուածք գոն ՚ի ձեզ,
այլ աղաղակ.
Խոկ՝ որ ամ̃քն են՝ այնոքիկ ը եպսի
իցեն. Ով ոք ապաշխարեն եգան

 ՚ի

'ի միաբանութիւն եկեղեցւոյ, և նոքա լի-
ցին այ. և կեցցեն 'ի Քս Յս։
Մ՛ի խաբէք եղբարք, զի այն որ կը-
ցորդ է բաժանողի եկեղեցւոյ՝ զարքայ-
ութիւն այ ոչ ժառանգէ։
Եւ որ ընթանայ արտաքի մտօք, ոչ
միաբանի չարչարանացն Քրիստոսի։

Գլուխ Ի։

Արդ՝ և դուք ջանացարուք
վայելել միով գոհութբ.
քանզի մի է մարմին Տն մե-
րոյ Յսի Քսի, և մի բաժակ գո-
հութե արեան նր և մի խորան։
Որպէս և մի եպիսկոպոս հանդերձ քահա-
նայական դասու, և այն պաշտօնէիւն
աղգակցութեամբ։
Զամենայն զոր ինչ և առնիցէք եղ-
բարք միաբանութբ գործեցէք։
Յոյժ կապեալ եմ 'ի սէր ձեր, վասնի
առաւել ցնծամ և զգուշացուցանեմ

զձեզ. ոչ ես՝ այլ Յս Քս, որում
և կապեալս կամ.
Այլև երկնչիմ ես, զի տակաւին
չև ես եմ կատարեալ.
Բայց յուսացեալ եմ թէ աղօթիւք
ձեր կատարեսցէ զիս. իբրու զի ար-
ժանաւորեցայց մասինն այսմիկ, և
՚ի սմա հանգեայց.
Այլ դաւանիմ յաւետարանն, իբրև
՚ի մարմին և յարիւնն Քսի. և յա-
ռաքեալսն՝ իբրև ՚ի սպասաւորս ե-
կեղեցւոյ.
Այլ զմարգարէսն սիրեմ, քանզի և
նոքա վն Աւետարանին քարոզեցին.
Այլ նմա սպասեալ ակն ունէին, և
՚ի նա հաւատացին և կացին միաբա-
նութբ Յսի Քսի.
Այլ նոքա արժանի են սիրոյ, վն մա
քուր գործոցն զոր վկայեաց տր մեր
Յս Քս. թէ հաւատարիմ համար
եալ են յաւետարանին որ է յոյս
մեր. Այլ եթէ ոք հրէութի ու-
սուցանէ ձեզ մի լուիք նմա.



Բար

Նարուօք է լսել յառնէ Թլփատե_
լոյ վ՟ քրիստոնէութեան, և ոչ յան_
Թլփատէ վ՟ Հրէութեան.

Իսկ եթէ երկոքեանն զՅ՟սէ Ք՟սէ
ոչ խօսին՝ նոքա իցեն իբրև զարձա
նս քարեայ, և իբրև զգերեզմանս
մեռելոց, յորոց վ՟ անուն մարդոյ՝
միայն է գրեալ.

Արդ՝ փախերուք դուք ՚ի չար առ_
ռնեստեց ն՟ց, և ՚ի գործոց իշխանի
աշխարհիս այսմիկ.

Գուցէ ցնորեցէք ՚ի խորհուրդս ն՟ր
և տկարանայցէք ՚ի սիրոյ ձերմէ, այլ
կացէք միաբան ՚ի միասին սիրով.

Գոհանամ զԱ՟յ իմոյ վ՟ մաքուր մ_
տաց ձերոց.

Նաև չէք ոք ՚ի ձէնջ՝ որ վկայէ ՚ի
ծածուկ՝ կամ յայտնի, եթէ ծան_
րացայ ումեք սակաւուք
և կամ բազմօք.

Գուլուի Գ.

Աղօթս առնեմ վն ամենե-
ցունց ձորս և խօսեցայ, զի
մի լիցի այս ինձ ՚ի վկայութիւն.
Զի թէպէտ և կամեցան ոմանք խա-
բել զիս մարմնով, սակայն հոգի ոչ
խաբի. զի յայտ է՝ և գիտէ թէ ուս-
տի եկն, կամ յով երթայ, և զծա-
ծուկսն զննէ.

Կաշեցի ՚ի ձայն մեծ՝ յորժամ առ
ձեզն էի, և խօսեցայ ընդ ձեզ բա-
նիւն այ. եթէ եւս ի հնազանդ կա-
ցէք, և քահանայից և սարկաւագաց.
Եւ են ոմանք որք խորհեցան զինէն,
եթէ զխորդ գիտացի ես զհերձուա-
ծըս ոմանց և ասացի զայն.

Վկայէ ինձ այն՝ որ կապեալ եմ
՚ի նա, եթէ ոչ ուսայ ՚ի մարդկանէ,
այլ հոգին գոչէր և ասէր, թէ մի
ինչ գործէք առանց եպիսկոպոսի.
Զմարմինս ձեր իբրև զտաճար այ

պաշտեցէք. և զմիաբանութիւն սիրեցէք և 'ի հերձուածոց փախերուք. Նմանեցարուք Յ͞սի Ք͞սի, որպէս և նա Հօր իւրոյ.

Ես զիմս արարի ո͞պ զայր կատարեալ միաբանութեամբ.

Ուր՝ ուր երկմտութի՛ւն և բարկութի՛ւն գոյ՝ անդ ոչ բնակէ Ա͞ծ.

Բայց այնոցիկ՝ որ ապաշխարենն, թողցէ ն͞ց Տ͞ր, եթէ դարձցին 'ի միաբանութի͞ ն͞յ և 'ի ժողովս եպիսկոպոսի

Հաւատամ շնորհացն Յ͞սի Ք͞սի, թէ նա լուծանէ 'ի ձէնջ զամենայն կապանս.

Խնդրեմ 'ի ձէնջ եղբարք, մի գործէք ինչ հակառակութ͞բ, այլ անուսամբն Յ͞սի Ք͞սի.

Այլ լսէ զի լուայ յոմանց զի ասէին, եթէ 'ի գիրս առաջինս՝ ոչ փառաբանի Աւետարանն՝ ո՛չ հաւատամք նմա. Ոչ ապաքէն ասացի ձեզ՝ եթէ գրեալ է՝ թէպէտ և նոքա ասեն՝ եթէ աւելորդ է.

Սոդ ինձ գիր առաջին Յս̃ի Քս̃ի է, որ ոչ յանկշտակէր, խաչն և մահն՝ և յարութիւն և հաւատոյն· յորս յայ-տոփիկ ակն ունիմ արդարանալ աղօ-թիւք ձեր·

Բարերք են քահանայք, բայց առա-ւել քան զնս̃ է քահանայապետն. որ հա-ւատարիմ է սրբութեն ա̃ծց, որ նա ինքն միայն գիտէ զծածուկսն ա̃յ·

Այլ նաև դուռն Հօր, և ընդ նմա մտանեն Աբրահամ՝ Իսահակ՝ Յա-կոբ՝ և մարգարէք՝ և առաքեալք և եկեղեցի·

Սոյսքիկ ամէն 'ի մի միաբանութիւն ա̃յ· Իսկ առաւելութի գոյ 'ի տր̃ ա-ւետարանին՝ գալուստ փրկչին տն̃ մե-րոյ Յս̃ի Քս̃ի, և չարչարանքն և յա-րութիւն նորա·

Սիրեցեալ են և մարգարէքն, զի վս̃ նր̃ քարոզեցին·

Բայց աւետարանն կատարումն է ա-նապականութեան, և երկոքեանն 'ի միասին բարի են հաւատացելոց·

Այլ

Եւ քանզի՝ ունիմք մխիթարութիւն և ողորմութիւն զյս՟ քս՟՝ որ է ՚ի ձեզ։

## Գլուխ Գ.

Պատմեցաւ ինձ եթէ միաբանութիւն գոյ յանտերք յեկեղեցին աստուծոյ։

